ՏԱՐԵԳԻՐ

ICRC

ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

ՀՈՒՆՎԱՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ 2024

Կարմիր խաչի միջազգային կոմիտեն (ԿԽՄԿ) չեզոք, անկողմնակալ և անկախ կազմակերպություն է, որը մարդասիրական պաշտպանություն և աջակցություն է տրամադրում զինված ընդհարումներից և բռնության այլ իրավիճակներից տուժած անձանց: 1992 թ.-ից ի վեր ԿԽՄԿ-ն մարդասիրական գործունեություն է ծավալում տարածաշրջանում աջակցելով հակամարտությունից տուժած անձանց, նպաստելով միջազգային մարդասիրական իրավունքի (ՄՄԻ) տարածմանը և կիրարկմանը և հանդես գալով որպես չեզոք միջնորդ հակամարտության կողմերի միջև:

Երևանում ԿԽՄԿ պատվիրակության և Գորիսում ենթապատվիրակության միջոցով շարունակական աջակցություն ենք ցուցաբերում Ղարաբաղյան հակամարտության 2020-2023 թթ.-ի սրացումների հետևանքով տուժած անձանց: Շարունակում ենք իրագործել Հայաստանի և Ադրբեջանի միջև սահմանամերձ համայնքների դիմակայության ամրապնդման ծրագրեր:

Աջակցել ենք հակամարտության սրացումների հետևանքով անհայտ կորած անձանց ընտանիքներին: Շարունակել ենք իրականացնել 2022թ.-ի նոյեմբերից մեկնարկած Սատարման ծրագիրը հիմնվելով այն ընտանիքների կարիքների գնահատման վրա, որոնց հարազատներն անհետացել են 2020թ. հակամարտության սրացման առնչությամբ: Բացի այդ, Հայաստանի պատկան մարմիններին տրամադրել ենք տեխնիկական և նյութական, այդ թվում դատաբժշկական փորձագիտական աջակցություն նպաստելու աճյունների հետ արժանապատիվ վարվեցողությանը և հակամարտության կամ արտակարգ այլ իրավիճակների հետևանքով անհայտ կորած անձանց ճակատագրերի պարզմանը: Աշխատել ենք նաև սահմանամերձ համայնքներում անհետաձգելի բուժօնության հասանելիությունն ամրապնդելու ուղղությամբ խթանելով բուժանձնակազմի գիտելիքների ու առողջապահական կենտրոնների նյութական կարողությունների զարգացումը:

Շարունակել ենք այցելել հակամարտության առնչությամբ պահվող այն անձանց, որոնց պահման փաստը հաստատվել է համապատասխան իշխանությունների կողմից: Այցելությունների ընթացքում մշտադիտարկել ենք նրանց հանդեպ վերաբերմունքը և ազատազրկման պայմանները, նպաստել ընտանիքների հետ կապի հաստատմանը: Իշխանությունների համաձայնությամբ ազատազրկված անձանց կապը ընտանիքների հետ պահպանվել է Կարմիր խաչի նամակների, հեռախոսազանգերի, բանավոր և տեսաձայնագրված հաղորդագրությունների միջոցով:

Անհայտ կորած և ազատազրկված անձինք, աճյունների հետ վարվեցողություն

Շուրջ **1,290 զանգ** և **այց** ենք ունեցել Երևանի և Գորիսի գրասենյակներում՝ հակամարտության սրացումների արդյունքում ընտանիքների բաժանման առնչությամբ:

62 ընտանիք դիմել է իրենց անհայտ կորած հարազատների ճակատագիրը պարզելու խնդրանքով և բացել որոնման հայտեր:

429 անձ դեռևս անհայտ կորած է համարվում հակամարտության 2020-2023 թթ. սրացումների հետևանքով՝ ընտանիքների կողմից ստացված դիմումների համաձայն: ԿԽՄԿ-ն շարունակում է աշխատել համապատասխան կառույցների հետ՝ որոնման և նույնականացման գործընթացը դյուրացնելու և ընտանիքներին հուզող հարցերին պատասխաններ տալու ուղղությամբ:

557 բանավոր, տեսաձայնային և գրավոր Կարմիր խաչի հաղորդագրություններ են փոխանցվել հակամարտության սրացումների առնչությամբ ազատազրկվածների և նրանց ընտանիքների միջև: Ավելին, ԿԽՄԿ-ն կանոնավոր կերպով այցելում է զինված հակամարտության առնչությամբ պահվող անձանց՝ դիտարկելով ազատազրկման պայմանները և նրանց նկատմամբ վերաբերմունքը, ինչպես նաև նպաստելով հարազատների հետ նրանց կապի պահպանմանը:

19 տեղեկատվական հանդիպում է անցկացվել է անհայտ կորածների ընտանիքների համար Սատարման ծրագրի շրջանակում Արմավիրի, Լոռու և Կոտայքի մարզերում:

3 անձ Ղարաբաղից տեղափոխվել է Հայաստան ԿԽՄԿ աջակցությամբ:

9 ներկայացուցիչ Հայաստանի քննչական կոմիտեից, Պաշտպանության նախարարությունից, ՆԳՆ փրկարար ծառայությունից և Դատաբժշկական գիտագործնական կենտրոնից (ԴԲԳԿ) մասնակցել է զանգվածային տուժածներով պատահարներին արձագանքման շրջանակում անցկացվող դասընթացներին:

10 ներկայացուցիչ Հայաստանի քննչական կոմիտեից, Առողջապահության նախարարությունից, ՆԳՆ-ից, ԴԲԳԿ-ից, Հայկական Կարմիր խաչի ընկերությունից (ՀԿԽԸ) և ԿԽՄԿ-ից մասնակցել է արտակարգ իրավիճակների արձագանքմանը նվիրված ճանաչողական այցին դեպի Փարիզի դատաբժշկական ինստիտուտ՝ զանգվածային տուժածներով պատահարներին արձագանքման շրջանակում:

17 կրտսեր և միջին աստիճանի քննիչ Քննչական կոմիտեից մասնակցել է ԴՆԹ-ին վերաբերյալ աշխատաժողովին, որը կազմակերպվել է ԿԽՄԿ-ի աջակցությամբ և իրականացվել ԴԲԳԿ ԴՆԹ լաբորատորիայի գենետիկական փորձագետների կողմից:

1 SeqStudio Flex գենետիկական անալիզատոր է նվիրաբերվել ԴԲԳԿ ԴՆԹ լաբորատորիային:

2 գենետիկ փորձագետ ԴԲԳԿ ԴՆԹ լաբորատորիայից մասնակցել է Թբիլիսիի ԿԽՄԿ գենետիկայի կենտրոնի եռօրյա դասընթացին, որն առնչվում էր խնդրահարույց հետմահու նմուշների ԴՆԹ պրոֆիլների գենետիկական վերլուծությանն ու մեկնաբանությանը:

2 ԴՆԹ փորձագետ ԴԲԳԿ ԴՆԹ լաբորատորիայից մասնակցել է դատաբժշկական լավագույն պրակտիկաների, ոսկրի մաքրման և ոսկրից ԴՆԹ-ի անջատման վերաբերյալ աշխատաժողովին, որը կազմակերպվել է ԿԽՄԿ-ի և Շվեյցարիայի Լոզանի համալսարանի կողմից:

2 ԴՆԹ փորձագետ ԴԲԳԿ ԴՆԹ լաբորատորիայից 2024 թ. հունիսին Թբիլիսիում մասնակցել է դեպի Վրաստանի Ազգային դատաբժշկական բյուրոյի (ISO/IEC 17025:2017 հավատարմագրված) ԴՆԹ լաբորատորիա ուսումնական այցին:

2 ԴՆԹ փորձագետ ԴԲԳԿ ԴՆԹ լաբորատորիայից մասնակցել է ԴՆԹ-ի միջոցով անհայտ կորածների և աղետների զոհերի նույնականացմանը նվիրված 2-րդ միջազգային սիմպոզիումին, որը կազմակերպվել էր Թբիլիսիի ԿԽՄԿ Գենետիկայի կենտրոնի կողմից:

6 գենետիկ փորձագետ ԴԲԳԿ ԴՆԹ լաբորատորիայից մասնակցել է Հայաստանում փորձաքննությունների ազգային բյուրոյի, «GTH DNA Consulting» ընկերության, Ինտերպոլի և «Eura DNA»-ի կողմից կազմակերպված «Հայաստանում դատական ԴՆԹ ծրագրերի խթանում» համաժողովին:

5 գենետիկ փորձագետ ԴԲԳԿ ԴՆԹ լաբորատորիայից մասնակցել է Փորձաքննությունների ազգային բյուրոյի, ThermoFisher-ի և Eura DNA-ի կողմից կազմակերպված Տարածաշրջանային դատաբժշկական ԴՆԹ դասընթացին:

5 ԴՆԹ փորձագետ մասնակցել է ISO 17025-ի վերաբերյալ դասընթացին, որն անցկացվել է ISO լաբորատորիաների հավատարմագրման նպատակով միջազգային աուդիտորների անցկացման ոլորտում մասնագիտացած արտաքին խորհրդատուի կողմից:

15 դատաբժիշկ Երևանի, Շիրակի, Լոռու և Գեղարքունիքի մարզերից մասնակցել է դատաբժշկական պաթոլոգիայի վերաբերյալ երկու գործնական աշխատաժողովների՝ Մինեսոտայի արձանագրության վրա շեշտադրմամբ:

2 սառնարանային խցիկ է նվիրաբերվել ու տեղադրվել Կապանի և

ԿԽՄԿ-ն օժանդակել և աջակցել է ԴԲԳԳԿ ԴՆԹ լաբորատորիային վերջինիս հմտությունների առաջին արտաքին գնահատման հարցում:

Իջևանի դիահերձարաններում:

7 պատգարակ ու դիահերձման 5 սեղան է նվիրաբերվել ԴԲԳԿ –ին:

15 սառնարան՝ նմուշների պատշաճ պահպանման համար, նվիրաբերվել է ԴԲԳԿ-ին:

9 ԴՆԹ անջատման, երկու ԴՆԹ քանակական հետազոտության, երկու կարճ տանդեմային կրկնապատկման հավաքածու է տրամադրվել ԴԲԳԿ ԴՆԹ լաբորատորիային:

1,508 շնչաղիմակ, 430 դեմքի պաշտպանիչ վահան, 828 ասեղ, 1,708 ակնոց, 10 դիահերձման փաթեթ, 15 սառցարան, 55 սարքավորումների յոթ հավաքածու, մեկ լաբորատոր գրասեղան և կահույք է նվիրաբերվել ԴԲԳԿ լաբորատորիային:

Առողջապահություն

25 բուժաշխատող Տավուշի և Գեղարքունիքի մարզերի խոշոր հիվանդանոցներից մասնակցել է Հիմնական կենսապահովման և վնասվածքների նախահիվանդանոցային կենսապահովման դասընթացին, որն անցկացվել է 2023 թ.-ին ԿԽՄԿ աջակցությամբ ստեղծված Հայաստանի անհետաձգելի և աղետների բժշկության միջազգային ուսումնավարժական կենտրոնի փորձագետների կողմից:

53 բուժաշխատող Արարատի, Վայոց Ձորի, Գորիսի ու Կապանի բժշկական կենտրոններից մասնակցել է անհետաձգելի բուժօգնության դասընթացի:

Վերապատրաստման սարքավորումներ, ներառյալ **ներռոսկրային անոթային ուղղորդիչ և ասեղներ, ինտուբացիոն մանեքեն լարինգոսկոպի շեղբերով, պատգարակներ և բեկակալներ** են նվիրաբերվել Հայաստանի անհետաձգելի և աղետների բժշկության միջազգային ուսումնավարժական կենտրոնին:

40 ներկայացուցիչ Առողջապահության նախարարությունից (ՀՀ ԱՆ), Փրկարար ծառայությունից, Երևանի, Կապանի և Իջևանի բժշկական կենտրոններից մասնակցել է «Զանգվածային տուժածներով պատահարների կառավարում» երեք դասընթացների:

Բժշկական նյութեր ու սարքավորումներ են տրամադրվել Կապանի, Գորիսի, Սիսիանի, Նոյեմբերյանի, Իջևանի, Բերդի, Արարատի, Վայոց Ձորի, Վարդենիսի բժշկական կենտրոններին, Միքայելյանի անվան վիրաբուժության ինստիտուտին, Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ-ին, Ջերմուկի և Արենիի առողջապահական կենտրոններին, ինչպես նաև Վայոց Ձորի Խաչիկ գյուղի բուժակ-մանկաբարձական կետին:

Վայոց ձորի բժշկական կենտրոնի Արյան փոխներարկման ծառայության համար ձեռք են բերվել **արյան պարկեր**:

Գորիսի արյան ծառայության կայանին օժանդակել ենք **առաջին անհրաժեշտության գույքով:**

ԱՆ դեղերի և բժշկական պարագաների ապահովման ազգային կենտրոն ՊՈԱԿ-ի բեռնատարը վերափոխվել է սառնարանային տրանսպորտային միջոցի՝ հանրապետության տարածքում առողջապահական հաստատությունների միջև սառը շղթայի և ջերմաստիճանի նկատմամբ զգայուն այլ բժշկական նյութերի տեղափոխման նպատակով:

Բժշկական գրքեր են նվիրաբերվել ՀՀ ԱՆ ազգային բժշկական գրադարանին, Երևանի պետական բժշկական համալսարանին և Երևանի հենակետային բժշկական քոլեջին:

Զանգվածային տուժածներով պատահարների կառավարման դասընթաց ԿԽՄԿ պատվիրակությունում, Երևան:

Հոգեկան առողջություն և հոգեսոցիալական աջակցություն (ՀԱՀՍԱ)

14 անձ, որոնք նախկինում պահվում էին անազատության մեջ հակամարտության առնչությամբ, ստացել են անհատական հոգեբանական աջակցություն և մասնակցել խմբային հանդիպումների:

11 անհայտ կորածների ընտանիք մասնակցել է հոգեբանական աջակցության անհատական հանդիպումների:

Սուպերվիզիայի 4 հանդիպում է կազմակերպվել վերապատրաստված հոգեբանների համար ԿԽՄԿ-ի և Շվեդական Կարմիր խաչի կողմից:

Բռնությունից տուժած **132 անձ** մասնակցել է տեղեկատվական հանդիպումների:

Դասընթաց նախկին ազատազրկվածների հետ աշխատող բուժաշխատողների և պետական մարմինների համար:

20 բուժաշխատող Գորիսի հիվանդանոցից մասնակցել է «Օգնիր օգնողին» դասընթացին՝ բաղկացած յոթ հանդիպումներից:

31 բուժաշխատող (18 հոգեբան և 13 ֆիզիոթերապևտ) տեղական ՀԿ-ներից և իշխանություններից մասնակցել է Շվեդական Կարմիր խաչի հետ համատեղ կազմակերպված երկու վերապատրաստման դասընթացների տեղական առողջապահության ոլորտի մասնագետների ու այն գերատեսչությունների համար, որոնք աշխատում են հակամարտությունների առնչությամբ նախկինում ազատազրկված անձանց հետ:

3,826 անձ օգտվել է հոգեկան առողջության և հոգեսոցիալական աջակցության (ՀԱՀՍԱ) ծրագրերից:

35 խմբային ՀԱՀՍԱ հանդիպում է կազմակերպվել Հայաստանի տարբեր մարզերում:

3,186 անձ, ներառյալ՝ Ղարաբաղից Հայաստան տեղափոխվածները և սահմանամերձ համայնքներում բնակվողները, մասնակցել են քաղաքացիական բնակչության տարբեր շերտերի վրա զինված ընդհարումների թողած հոգեբանական հետևանքների վերաբերյալ խմբակային հանդիպումների:

195 անդամ անհայտ կորածների ընտանիքներից հոգեբանական աջակցություն է ստացել տնայցերի կամ աջակցության խմբերի միջոցով:

Բնակավայրերի ջրամատակարարում

Ավտոմատ փոխանցման անջատիչներով 4 պահուստային գեներատոր է տեղադրվել Կապանի, Սիսիանի, Իջևանի բժշկական կենտրոններում և Ջերմուկի առողջության կենտրոնում՝ հոսանքազրկման դեպքում էլեկտրաէներգիա ապահովելու նպատակով:

2 նոր բուժկետ է կառուցվել ՀՀ հարավային և հյուսիսային շրջաններում:

20 արևային ֆոտովոլտային համակարգ՝ 740 կՎտ հզորությամբ, տեղադրվել է չորս բժշկական կենտրոնում, երկու առողջապահական կենտրոնում, երեք առողջության առաջնային պահպանման կենտրոնում և 11 բուժակ-մանկաբարձական կետում, Սյունիքի, Վայոց Ձորի, Գեղարքունիքի և Տավուշի մարզերում:

Հարավային շրջանում վերանորոգվել է **բուժակ-մանկաբարձական կետի տանիքը**:

15 կափույր և երկու ստորջրյա պոմպ է նվիրաբերվել Գեղարքունիքի և Տավուշի մարզերի երկու համայնքների:

2 պահուստային գեներատոր՝ ավտոմատ փոխանցման անջատիչներով, տեղադրվել է Կապանի և Մարտունու դիահերձարաններում՝ հոսանքազրկման դեպքում էլեկտրաէներգիա ապահովելու նպատակով:

Երևանի ԴԲԳԿ դիահերձարանի լուսավորությունն ու օդափոխության համակարգը բարելավվել են՝ ապահովելով առողջապահական և անվտանգության միջազգային չափանիշներին համապատասխանությունը:

Էլեկտրահաղորդման համակարգն է թարմացվել Մարտունու դիահերձարանի, դիահերձարանի սառնարանային կոնտեյների և գեներատորի միջև, իսկ դիահերձարանում տեղադրվել է **ավտոմատ փոխանցման անջատիչ՝** հոսանքազրկման դեպքում էլեկտրաէներգիա ապահովելու նպատակով:

Միջազգային մարդասիրական իրավունքի խթանում

30 սպա, պայմանագրային զինծառայող և ենթասպա ՀՀ զինված ուժերի տարբեր ստորաբաժանումներից մասնակցել է դասընթացավարների վերապատրաստման երկօրյա դասընթացի, որի շրջանակներում քննարկվել են Միջազգային մարդասիրական իրավունքի (ՄՄԻ) մարտահրավերները ժամանակակից զինված հակամարտություններում:

14 միջին և բարձր աստիճանի կոչում ունեցող զինվորական իրավաբան ՀՀ ՊՆ տարբեր ստորաբաժանումներից մասնակցել է ՄՄԻ-ի շրջանակներում ժամանակակից զինված ուժերում իրավախորհրդատուի դերի վերաբերյալ դասընթացին:

48 սպա և ենթասպա ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերից իրազեկվել է ԿԽՄԿ հանձնագրի, գործունեության և ՄՄԻ հիմունքների վերաբերյալ Սյունիքի մարզի Գորիս և Կապան քաղաքներում կազմակերպված դասընթացների շրջանակներում:

18 սպա, ենթասպա և սերժանտ ՀՀ ՊՆ խաղաղապահ բրիգադից տեղեկացել է ԿԽՄԿ-ի հանձնագրի և գործունեության մասին:

Հատուկ նշանակության բանակային կորպուսի մարտավարական օղակի **20 միջին և բարձրաստիճան սպա** մասնակցել է ՄՄԻ հիմունքների վերաբերյալ իրազեկման հանդիպման Գորիսում:

ՄՄԻ հիմունքների վերաբերյալ իրազեկման հանդիպում մարտավարական օղակի սպաների համար:

30 բարձրաստիճան սպա ՊՆ-ից և Գլխավոր շտաբից մասնակցել է ռազմական պլանավորման և գործողությունների վերաբերյալ որոշումների կայացման ընթացքում ՄՄԻ-ի կարևորության շուրջ իրազեկման հանդիպման:

50 կուրսանտ մասնակցել է ՄՄԻ հիմունքների վերաբերյալ իրազեկման հանդիպման Ա. Խանփերյանցի անվան ռազմական ավիացիոն համալսարանում:

40 միջին և բարձրաստիճան զինվորական կոչում ունեցող սպաներ ՀՀ զինված ուժերի մարտավարական օղակի 2-րդ և 3-րդ բանակային կորպուսից մասնակցել են Դիլիջանում և Ծափաթաղում ՄՄԻ հիմունքների վերաբերյալ իրազեկման հանդիպմանը:

ՊՆ զորամասերից մեկի **300 շրջանավարտ սերժանտ** Երևանում մասնակցել է ՄՄԻ հիմունքների վերաբերյալ իրազեկման հանդիպմանը:

ՀՀ ՊՆ և ԱԱԾ սահմանապահ զորքերի **3 ներկայացուցիչ** Իտալիայի Սան Ռեմո քաղաքում մասնակցել է Զինված հակամարտությունների իրավունքի վերաբերյալ դասընթացին:

179 անձ, այդ թվում՝ ուսանողներ և իրավունքի մասնագետներ, մասնակցել է հայաստանյան գործընկեր համալսարանների հետ համատեղ իրականացվող **Միջազգային հանրային իրավունքի դպրոցի** դասընթացի վեց հանդիպումների:

8 տարբեր կրթական հաստատություններից, այդ թվում՝ Ռազմական ակադեմիայից և Հայաստանի դիվանագիտական դպրոցից ութ թիմ, մասնակցել է Ժնևի կոնվենցիաների 75-ամյակին նվիրված ՄՄԻ-ի ազգային դատախաղ-մրցույթին:

20 ուսանող և մասնագետ մասնակցել է երկօրյա դասընթացին՝ նվիրված ՄՄԻ ժամանակակից հայեցակետերին, մարտահրավերներին և բացթողումներին:

Տեղի հիմնական լրատվամիջոցները ներկայացնող **9 լրագրող** մասնակցել է մարդասիրական խնդիրների և դրանց լուսաբանման վերաբերյալ ԿԽՄԿ մեդիա աշխատաժողովին և դրան հաջորդող մեդիա շրջայցին Արմավիրի մարզ:

Տնտեսական աջակցություն

15,450 դրամական փոխանցում է արվել ԿԽՄԿ-ի կողմից 2024 թ.-ի հունվարից ապրիլ ընկած ժամանակահատվածում՝ Ղարաբաղից Հայաստան տեղափոխված և Սյունիքի, Վայոց Ձորի, Գեղարքունիքի ու Տավուշի մարզերում բնակություն հաստատած անձանց բնակարանի վարձավճարի և կոմունալ վճարումների համար պետական աջակցության ծրագրի շրջանակում: Հունվարի դրամական փոխանցումներն իրականացվել են ԿԽՄԿ-ի կողմից՝ ՀԿԽԸ-ի հետ համագործակցությամբ:

18 տնային տնտեսություն Գեղարքունիքի մարզի Կախակն գյուղից ստացել է աջակցություն փոքր դրամաշնորհների տեսքով՝ եկամտաբեր գործունեություն ծավալելու նպատակով:

18 շահառու Գեղարքունիքի մարզի Կախակն գյուղից մասնակցել է վերապատրաստման դասընթացների՝ հաշվապահության, մարքեթինգի և վաճառքի ոլորտներում իրենց հմտություններն ամրապնդելու նպատակով:

27 տնային տնտեսություն, այդ թվում՝ անհայտ կորածների, պահվող անձանց և նախկինում պահվող անձանց խոցելի ընտանիքները, եկամտաբեր գործունեություն ծավալելու նպատակով ստացել են աջակցություն՝ փոքր դրամաշնորհների տեսքով:

11 տնային տնտեսություն Գեղարքունիքի մարզի Ներքին Շորժա գյուղից ստացել է աջակցություն փոքր դրամաշնորհների տեսքով՝ եկամտաբեր գործունեություն ծավալելու նպատակով:

25 տնային տնտեսություն Գեղարքունիքի մարզի Ներքին Հանդ գյուղից ստացել է աջակցություն փոքր դրամաշնորհների տեսքով՝ եկամտաբեր գործունեություն ծավալելու նպատակով:

60 հա չօգտագործված հողատարածք ընդգրկվել է մելիորացման ծրագրում:

34 տնային տնտեսություն, այդ թվում՝ անհայտ կորածների, պահվող անձանց և նախկինում պահվող անձանց խոցելի ընտանիքները, ստացել են դրամական աջակցություն՝ հրատապ կարիքները հոգալու համար:

41 տների վերականգնման նախագիծ է մեկնարկել հատուկ պաշտպանության կարիք ունեցող անձանց համար՝ «Հայաստանի Ֆուլեր տնաշինական կենտրոն» ՀԿ-ի հետ համագործակցությամբ:

4 տնտեսության Սյունիքի մարզի Բարձրավան գյուղից տրամադրվել են կաթիլային ոռոգման հավելյալ համակարգեր՝ ազնվամորու դաշտերի ոռոգման նպատակով:

109,800 կգ բարձրորակ և հավաստագրված աշնանացան ցորենի սերմեր են բաժանվել Գեղարքունիքի, Սյունիքի և Վայոց Ձորի մարզերի հինգ սահմանամերձ համայնքներին՝ **258 տնային տնտեսության** աջակցելու նպատակով: Սերմերը նախատեսված են **711 հա** վարելահողի մշակման համար:

Խնածախ և Վաղատուր համայնքների 43 տնային տնտեսություններին պատկանող **60 հա** չօգտագործված հողատարածք ընդգրկվել է մելիորացման ծրագրում:

Ջաղացաձոր համայնքի **24 առավել խոցելի տնային տնտեսություն** ստացել է բազմանպատակ դրամաշնորհ, յուրաքանչյուրը՝ 130,000 ՀՀ դրամի չափով, հիմնականում վառելափայտի ձեռքբերման և տեղափոխման նպատակով:

Կիրանց համայնքում **մշտական բնակություն ունեցող 96 տնային տնտեսություն** ստացել է բազմանպատակ դրամաշնորհ, յուրաքանչյուրը՝ 130,000 ՀՀ դրամի չափով, հիմնականում վառելափայտի ձեռքբերման և տեղափոխման նպատակով:

55 ՀԿԽԸ կամավոր Գեղարքունիքի և Սյունիքի մարզերից 2024 թվականին կարողությունների զարգացման ծրագրի շրջանակներում անցել է տնտեսական անվտանգության հիմունքների վերաբերյալ վերապատրաստում:

229 ՀԿԽԸ կամավոր Հայաստանի հինգ՝ Արարատի, Գեղարքունիքի, Սյունիքի, Տավուշի և Վայոց Ձորի մարզերից ընդգրկվել է հնարավոր ճգնաժամերին արձագանքելու համատեքստում կամավորների պատրաստվածության և կարողությունների գնահատման գործընթացում:

Մենք աջակցում ենք զինված հակամարտությունից և բռնության այլ իրավիճակներից տուժած մարդկանց ամբողջ աշխարհում՝ անելով հնարավորինը նրանց կյանքն ու արժանապատվությունը պաշտպանելու և տառապանքը մեղմելու համար, հաճախ՝ Կարմիր խաչի և Կարմիր մահիկի մեր գործընկերների հետ համագործակցությամբ: Մենք նաև ձգտում ենք պաշտպանել մարդկանց զրկանքներից՝ մարդասիրական իրավունքը խթանելու և ամրապնդելու, ինչպես նաև համամարդկային մարդասիրական սկզբունքները պահպանելու միջոցով:

Կարմիր խաչի միջազգային կոմիտեի պատվիրակություն
Հայաստանում
73/3 Նաիրի Զարյան փ.
0014 Երևան, Հայաստան
Հեռ.՝ +374 297415, erevan@icrc.org
Գլխավոր նկարը՝ Մուհամեդ Խավցուկով/ԿԽՄԿ
© ԿԽՄԿ, մարտ 2025 թ.

facebook.com/icrcAm
twitter.com/icrcAm
instagram.com/icrc

ICRC

2024.2245/002